

ԴԻՏՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՈՍՏԻԿԱՆ» ԲԱՌԻ ՄԱՍԻՆ

Հայկական ու եվրոպական պատմագիտության մեջ տիրապետող կարծիքի համաձայն, գրաբարում ընդհանրապես «վերակացու» նշանակող «ոստիկան» բառը, արաբական շրջանի Հայաստանում հատուկ իմաստ էր ստացել և տրվում էր Օմայան ու Աբբասյան խալիֆաների ներկայացուցիչներին, և ինչպես Սասանյան տիրապետության շրջանի պարսիկ (կամ հայ) կառավարիչները կրում էին «մարզպան» անունը, նույն ձևով էլ արաբական շրջանի օտար կառավարիչներին կոչում էին «ոստիկան»:

Ճշտելու համար այս դրույթը հարկավոր է քանասիրական վերլուծման ենթարկել հենց արաբական տիրապետությանը ժամանակակից կամ մերձավոր շրջանի հայկական աղբյուրները, այսինքն՝ VIII-ից մինչև X դարի սկզբի հայ պատմիչներին:

Բնականաբար, առաջին հերթին պետք է նկատի ունենալ Ղևոնդ վարդապետի Պատմությունը, քանի որ դա միակ պատմական աղբյուրն է, որը բաշխ բուն իմաստով ժամանակակից Հայաստանում արաբական տիրապետության շրջանին²: Սակայն Ղևոնդը ոչ մի տեղ Հայաստանի արաբ կառավարիչներին ոստիկան չի կոչում: Նրա մոտ գործածված բառերն են՝ «հրամանատար» և «զօրավար», երբեմն էլ, պարզապես, առանց որևէ անուն տալու, ասում է թե այսինչ խալիֆան այսինչ անձնավորությանը ուղարկեց Հայաստան³: Օրինակ, Մուհամմադ իբն Մրվանին կոչում է «զօրադուխս» և «զօրավար»⁴: Նույն անվանումը նա տալիս է նաև Զառա՝ ալ-Հարամիին (Զառայ) և Սաիդ ալ-Հարաշիին (Սեթ Հարաշի)⁵: Նրա մոտ հաճախ օգտագործված է «հրամանատար» բառը, որով նա կոչում է Կասիմին (Կասմ)⁶, Իսհակ իբն Րամաիլ ալ-Օթայլին (Իսահակ որդի Մսլիմի) կոչվում է «հրամանատար աշխարհիս Հայոց»⁷, Հասան իբն Կահթարան՝ «հրամանատար ի վերայ երկրիս Հայոց»⁸, իսկ Ռաուհ ալ-Մուհալլսին (Ռոհ)՝ «իշխան և հրամանատար ի վերայ աշխարհիս Հայոց»⁹: Սակայն «իշխան» բառը հատուկ չէ սիայն Արմինիայի կառավարիչներին, քանի որ Ղևոնդն այդպես է կոչում նաև խալիֆային՝ «իշխան Իսլամայի»¹⁰ կամ «իշխան տաճկաց» ձևերով:

Հրամանատար բառի հետ մեկտեղ Ղևոնդը գործ է ածում նաև «հրամանատարություն» հասկացությունը, օրինակ՝ Նզիդ իբն Ուսայդ ալ-Սուլամիի իշխանության տարիների մասին գրում է. «Ի հրամանատարության Նզիդի և իշխանության Աբդուլայի միևնույն»¹¹, այսինքն ուզում է ասել՝ Աբու Զաֆար Մանսուրի խալիֆայության և Նզիդի կառավարչության ժամանակ:

Նույն երևույթը տեսնում ենք նաև արաբական տիրապետության վերջին տարիների անցքերի ականատես Թովմա Արժրունու «Պատմության» մեջ: Արաբ կառավարիչներին նա կոչում է վերակացու, մեծ հազարապետ, զսրավար և նույնիսկ մարզպան, բայց ոչ երբեք ոստիկան: Արաբների կառավարիչը նրա մոտ կոչվում է «վերակացու Հայոց և հալատարիս ի վերայ հարկաց արքունի Ասուսկի»¹²: Մի քիչ սառն. նույն անձը կոչվում է «մեծ հազարապետ»¹³, Արաբ

¹ Մ. Չամչյան, Պատմություն հայոց, Վենետիկ, 1785, Բ, էջ 376: Ղ. Իսահակյան, Հնախօսություն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Բ, Վենետիկ, 1835, էջ 223-224: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, էջ 523: M. J. Saint-Martin. Mémoires historiques et géographiques sur l'Arménie, t. I, Paris, 1818. էջ 340: H. Hübschmann. Armenische Grammatik. I Theil. Armenische Etymologie, Leipzig, 1895. էջ 215-216:

² Ն. Ակինյան, Ղևոնդ Երեց պատմագիր, Վանդեա ամսօրյա, 1929:

³ «Պատմություն Ղևոնդեայ մեծի վարդապետի Հայոց», ՍՊԲ, 1887, էջ 127, 162:

⁴ Նույն տեղում, էջ 19, 23:

⁵ Նույն տեղում, էջ 102:

⁶ Նույն տեղում, էջ 32:

⁷ Նույն տեղում, էջ 120:

⁸ Նույն տեղում, էջ 136:

⁹ Նույն տեղում, էջ 161:

¹⁰ Նույն տեղում, էջ 8:

¹¹ Նույն տեղում, էջ 135:

¹² «Թովմայի վարդապետի Արժրունու, Պատմություն տանն Արժրունեաց», ի լոյս էած Բ. Պ., ՍՊԲ, 1887, էջ 107:

¹³ Նույն տեղում, էջ 108:

կառավարի: Յուսուֆ ալ-Լարվազիին Ռովման կոչում է «կարծեցիկ մարդպետ»¹⁴, Արար կառավարչի պաշտոնը բնորոշելու համար Քավման ունի «վերակացություն»¹⁵ և «զօրապետություն»¹⁶ բառերը:

Ոստիկան բառին չենք հանդիպում նաև «Աղուանից Պատմություն» մեջ, որը կապավորվել է ձևավորվել է արարական տիրապետության ընթացքում¹⁷, Արար կառավարիչ Արդ ալ-Ազիզի մասին խոսելիս պարզապես ասվում է «Արդ Ազիզ իշխանն տաճկաց»:

Առաջին հայ պատմիչը, որ արարական տիրապետության շրջանի համար օգտագործում է ոստիկան բառը, X դարի սկզբին գործող Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցին է, Արար կառավարիչներին նա ընդհանրապես կոչում է ոստիկան, լինեն դրանք Հայաստանում թե որևէ հարևան երկրում: Դրասխանակերտցուն հետևելով, արդեն ավելի ուշ շրջանի պատմիչներ, ինչպես Ասողիկը, Սամվել Անեցին, Վարդանը, Կիրակոս Գանձակեցին և այլն, գործ են ածում նաև ոստիկան տերմինը:

Այս բոլորից նզրակացնում ենք, որ արար կառավարիչների համար այ պատմիչները չեն ունեցել ոչ մի որոշակի անվանում: Այդ կառավարիչները իրենց ժամանակակից մատենագրության մեջ կոչվել են մերթ հրամանատար կամ զոբավար, մերթ վերակացու կամ մեծ հազարապետ և մերթ էլ ոստիկան: Բայց սրանցից ոչ մեկն էլ միայն արար կառավարչին բնորոշ մի բառ չի եղել, այլ ընդհանրապես նշանակել է թագավորի (խալիֆայի) կողմից նշանակված պետական պաշտոնյա:

Անվանու մեկի այս բաղմագանությունը և մանավանդ անորոշությունը դալիս էր հենց արարներից: Արարները ոչ մի որոշակի անուն չէին տալիս խալիֆայության նահանգների կառավարիչներին¹⁸, Արար պատմիչների մոտ օգտագործվում էին ամիր (أمیر)¹⁹, ամիր (عامل)²⁰ և ուալի (وال) բառերը, որոնցից առաջինը տառադիորեն նշանակում է հրամանատար, հրամայող, երկրորդը՝ գործավար կամ պաշտոնյա, իսկ երրորդը՝ վերակացու, կառավարիչ: Արարական խալիֆայության մեջ չկար նահանգական կառավարչի այնպիսի որոշակի անվանում, ինչպիսին գոյություն ունեւ Սասանյան Պարսկաստանում կամ Արևելահռոմեական կայսրության մեջ:

Արար պատմիչների նախասիրած ձևը «կառավարիչ նշանակեց» (والی) բայի գործածումն է, թեև դրա գոյականն էլ է օգտագործվում: Օրինակ, IX դ. արար պատմիչ Յակուբին մոտ կա أقام والیا²¹, այսինքն՝ «վալի՝ կառավարիչ նշանակեց» արտահայտությունը: Եւրպուրին գործ է ածում նաև Արմինիայի կառավարիչ (أرمينية والی)՝ ձևը, կամ մի կառավարչի մասին խոսելիս ասում է այսինչի «կառավարչության ժամանակ» (فی ولايته)²², Պատմիչների մոտ հաճախ է օգտագործվում նաև «ամիր» բառը՝ գործակալ կամ վերակացու:

¹⁴ Նույն տեղում, էջ 120:

¹⁵ Նույն տեղում, էջ 108:

¹⁶ Նույն տեղում, էջ 215:

¹⁷ Հ. Առաքյան, Մովսիսի կաղանկատությանը երրորդ գիրքը պատմութեան Աղուանից, «Բաղմալեպ», 1897, էջ 370—371; A. Manandian, Beiträge zur albanischen Geschichte, Leipzig, 1897, էջ 3—22: Ն. Ակինյան, Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատացի) և իր Պատմութիւն Աղուանից, «Հանդես Ամսօրյա», 1933: «The History of the Caucasian Albanians by Movses Dasxuranci», trans. by C. J. F. Dowsett, London, 1961, էջ XI—XX:

¹⁸ Gaudetroy-Demombynes, Le monde musulman et byzantin jusqu'aux croisades, Paris, 1931, էջ 223—225: M. Ghasarian, Armenien unter der arabischen Herrschaft, Marburg, 1903, էջ 55—58:

¹⁹ A. A. Duri, Amīr, Enc. de l'Islam, nouvelle édition, 1960, t. I, էջ 151—152:

²⁰ A. A. Duri, Amīl, Enc. de l'Isl., t. I, էջ 447—448:

²¹ Ibn Wadhih qui dicitur al-Jaqubi Historiae, II. Lugd. Bat., 1883, էջ 308:

²² Liber expugnationis regionum auctore al-Beladsori, Lugd. Bat., 1866, էջ 203:

²³ Նույն տեղում, էջ 210:

իմաստով: Յակուբին մի անձնավորության կառավարիչ նշանակելու մասին խոսելիս ասում է, որ խալիֆան նրան ուղարկեց որպես ամիր (Xalif ad-Daula) XIII դ. արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրն օգտագործում է նաև «ամիր նշանակեց» (اميراً)²¹ բայր: Նրա մոտ կա նույնիսկ «Արմինիայի տերը» արտահայտությունը (صاحب ارمينية)²²:

խալիֆայության, նահանգական կառավարիչների անվանման այս բաղադրանքները և անորոշությունը հետևանք էր հենց նահանգների՝ որպես վարչական միավորների անկայուն վիճակի: Արաբական խալիֆայության նահանգները մեծ մասամբ վերջնականապես ձևավորված միավորներ չէին²³, Օրինակ, Իրաք նահանգը (այժմյան Իրաքի հարավային կեսը) միավորվել էր իրանական նահանգների հետ, Արմինիա նահանգը մերթ ունենում էր առանձին կառավարիչ, մերթ միացվում էր Ասորպատականին, մի ուրիշ անգամ՝ Ջազիրային (Վերին Միջագետք) և կամ այս երեքը միասին ունենում էին մեկ ընդհանուր կառավարիչ²⁴:

Այսպիսի պայմաններում ինչպե՞ս կարող էր գոյություն ունենալ որևէ որոշակի տերմին, որով կոչվեր և՛ ասկ Արմինիայի կառավարիչ, և՛ մի քանի խոշոր նահանգների միացյալ կառավարիչը, որն իր ձևերում ուներ մի փոքրիկ կայսրություն:

Վարչական միավորների հարափոփոխ վիճակը խալիֆայության մեջ առաջ բերեց կառավարչի անվանման բաղադրանքները և անորոշություն, որի ազդեցության տակ հայկական միջավայրում ևս տեղեկաց նույնանման վիճակ, Հրամանատար և այլ անվանումների կողքին հավանաբար օգտագործվում էր նաև ոստիկան բառը²⁵, որը ինչպես նախկին շրջաններում, այդ ժամանակ ևս պետք է ունենար լուրջ որևէ իշխողի կողմից նշանակված պետական պաշտոնյայի իմաստ: Եթե համեմատենք արաբ կառավարչին բնորոշելու համար հայերենում և արաբերենում կիրառված բառերը, ապա կտեսնենք, որ դրանք ձևականորեն որոշ չափով իրար համապատասխանում են: Օրինակ, հրամանատար և զորավար բառերը համապատասխանում են արաբերեն «ամիր»-ին, իսկ վերակացու և ոստիկան բառերը հիշեցնում են արաբերեն «ամիր» բառը: Սակայն այսպիսի համեմատությունները շատ երկրորդական նշանակություն ունեն, քանի որ դրանք բոլորն էլ հիմնականում իսլամի իմաստով են գործածվել:

Շատ հետաքրքրական է նշել, որ «ոստիկան» բառը որոշ կիրառում է ունեցել Բագրատունյաց ժամանակաշրջանում: Թեև Արծրունյաց տան Պատմության հեղինակը Հայաստանի արաբական շրջանի համար ոչ մի տեղ չի օգտագործել «ոստիկան» բառը, սակայն Բագրատունյաց շրջանի համար նա և նրա անանուն շարունակողը այդ բառը գործ են ածում: Նա հիշում է, որ Աշոտ I թագավորը իր որդի Շապուհի միջոցով Վաչագուրականի իշխան է նշանակում սպանված Դերենիկի որդուն՝ Աշոտին, իսկ Գագիկ Ապամրվանին, դարձնում է ոստիկան (եթե զիջանություն ի ձեռս Աշոտի որդւոյ Դերանկին... և գագիկ որ և Ապամրուան զնա ոստիկան կարկեաց ի վերայ աշխարհին):²⁶ Գագիկ Ապամրվանը թագավորի կողմից նշանակված մի անձնավորություն էր, որի պարտապանությունն էր խնամակալ իննել Դերենիկի զեռաթի որդիներին: Մի ուրիշ անգամ, խոսելով Գագիկ Ապամրվանի իշխանության մասին, Թովմոն օգտագործում է «ոստիկանություն»²⁷ արտահայտությունը: Ախթամարի տաճարի շինարարությանը նվիրված հատվածում Թովմաչի անանուն շարունակողը, վկայակոչելով Գագիկ ինքնունու նշանակած մի վերակացուի, ասում է. «պատմեաց մեզ և հաւատարիմ ոստիկան մի ի գործավարաց քաղաքին»²⁸: Պարզ է, որ այստեղ իոսսը հալ պաշտոնյայի մասին է:

Մոտավորապես նման իմաստով ոստիկան բառն օգտագործում է նաև Հովհաննես Դրասխանակերտցին: Հայոց թագավոր Սմբատ I-ի կողմից Դվինի կառավարիչ նշանակված երկու

²¹ Jaqubi, էջ 447:

²² Ibn al-Athir, Կահիրե, Ե, էջ 52:

²³ Նույն տեղում, Գ. էջ 233:

²⁴ Godefroy-Demonbynes, Le monde musulman, էջ 329—332:

²⁵ A. Kremer, Culturgeschichte des Orients unter den Chalifen, I, Wien, 1875, էջ 184:

²⁶ M. Ghazarian, Armenten unter der arabischen Herrschaft, էջ 56:

²⁷ Թովմա, էջ 228:

²⁸ Նույն տեղում, էջ 232:

²⁹ Նույն տեղում, էջ 296:

չըբայրներին նա տեղանում է «գլխաւոր աստիկանք և հրամանաւարք ըաղաքին»³³, Բագրատունեաց տիրապետութեան վերջին շրջանին և նրան հաջորդող դարերին վերաբերող գործերում «ոստիկան» բառն այլևս չի օգտագործված:

Այսպիսով պարզվում է, որ արաբական շրջանին ժամանակակից կամ նրան մոտիկ պատմիչներից (Ղևոնդ, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի և Աղուանից Պատմութեան հեղինակները) միայն Դրասխանակերտցին է, որ արաբ կառավարիչներին կոչում է «ոստիկան»:

Դրասխանակերտցին հայ պատմագրություն մեջ հայտնի է որպես ընթերցական արվեստին ծանոթ և արվեստական ոճի կողմնակից հեղինակ³⁴: Բագրատունեաց շրջանում առաջատար անկախ լեզուն արդեն հեռացել էր դրաբարից ու մատենագիրներն ստիպված էին նմանողական ոճին դիմել, և հենց ինքը՝ Դրասխանակերտցին էր առավել կողմնակից այսպիսի ոճի: Սակայն արվեստականություն կա Դրասխանակերտցու ոչ միայն ոճի, այլև բառապաշարի մեջ: Խալիֆայի փոխարեն նա գործածում է «ամիրապետ» և ոչ թե «ամիր մուսնիր» բառը, որը հանդիպում ենք Ղևոնդի³⁵ և այլոց մոտ: Հայ մատենագրության մեջ «ամիր մուսնիրը» արաբերեն «ամիր ալ-մուսնին» (امير المؤمنين) «հավատացյալների իշխան» արտահայտությունն ազգազգա՝ (հավանաբար մոգավրդական) ձևն է և, ընկանաբար, Դրասխանակերտցու ականջին կհնչեր որպես «զեղչուկ բուն»: Բացի ամիր մուսնիրից, հայ մատենագիրները խալիֆա բառի տեղ գործ էին ածում նաև «իշխան Իսմայիլ» կամ «իշխան տաճկաց» արտահայտությունները, որոնք անորոշ իմաստ ունեն: Դրասխանակերտցին հստակություն է մտցնում իր օգտագործած «ամիրապետ»³⁶ բառով:

Դրասխանակերտցին հստակություն է մտցնում նաև արաբ կառավարչի անվանման մեջ, և էթե Սասանյան շրջանի պարսիկ կառավարիչները կոչվել են «մարզպան», ապա արաբական շրջանի կառավարիչներին նա կոչում է «ոստիկան»:

«Ոստիկան» բառը մի քանի անգամ օգտագործված ենք դնում ղևո V դարի Թարգմանութեանների մեջ՝ և միշտ էլ վերակացուի իմաստով: Հին կտակարանում «ոստիկանը» գործածված է տասից ավելի անգամներ³⁷: Ս. Գրքի հունական բնագրի հետ համեմատելիս տեսնում ենք, որ այս բառի դիմաց հունարենում կա մեծ մասամբ $\pi\alpha\tau\epsilon\rho\sigma$ վերակացու, վերադիտող, հսկիչ, իսկ որոշ ղևաբերում գրեթե նույնիմաստ $\pi\alpha\tau\epsilon\rho\sigma$ բառը «Ոստիկանը» գործածված է նաև եվսեբեսի «Քրոնիկոնի» և Հովհան Ոսկերեբանի «Յաւետարանագիրն Մատթեոս» երկերի հայերեն թարգմանությունների մեջ³⁸:

Սերեոսի Պատմության մեջ մի քանի տեղ հանդիպում ենք «ոստիկան» բառին՝ թաղավորին հաճատարիմ վերակացուի իմաստով: Խոսքով Փարվեզի մեծամեծների սաղրանքների պատճառով կասկածի տակ ընկած և արքայից արքայի մոտ կանչված Մուշեղ Մամիկոնյանը, իմանալով իր ղևո սարքված դավի մասին, հեռանում է և ճանապարհին ձերբակալում «ամիր Ի փուշտիպանաց արքայի», որը մի քանի տող ստորև կույված է «ոստիկան փուշտիպան»³⁹: Փուշտիպանը պահվաճերների փոխառյալ⁴⁰ բառ է և նշանակում է թիկնապահ՝ զինվոր, իսկ այս ղևաբերում «ոստիկան փուշտիպանը» արքունի պաշտոնյա է: Մորիկ կայսեր սպանությունից հետո Խոսրով Փարվեզի բանակը մտնում է Արևելահռոմեական կայսրության հողերը և հասնում մինչև Պաղեստին: Երուսաղեմի բնակիչները հնազանդվելով պարսիկներին խնդրում են նշանակել պարսիկ կառավարիչներ՝ «ոստիկան» արաբ հաւատարիմս⁴¹, սակայն շուտով ըմբոստանում են և

³³ «Հովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցույ Պատմութիւն Հայոց», ի լոյս բերուողաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853, էջ 89:

³⁴ Մ. Ա. Բ. Գ. Ե. Զ. Ը. Հայոց հին գրականություն պատմություն, Լ., Երևան, 1944, էջ 438—459:

³⁵ Ղևոնդ, էջ 3:

³⁶ Դրասխանակերտցի, էջ 58:

³⁷ Տե՛ս «Ոստիկան», Համարաբառ Հին և նոր կտակարանաց, Սրուսաղեմ, 1895:

³⁸ «Հայերեն արմատական բառարան» և, էջ 541:

³⁹ «Սերեոսի Կաթողիկոսի Պատմութիւն», ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939, էջ 45—46:

⁴⁰ H. Hübschmann, Armenische Grammatik, I, էջ 225:

⁴¹ Սերեոս, էջ 82:

ստանում Սասանյան կառավարիչներին՝ «զոտիկանս քաղաքին Պարսից»⁴²։ Յոթերորդ դարում, երբ Կոստանդին կայսրը քաղկեդոնականության հրավիրեց հայերին, վերջիններս պատասխան թղթի մեջ հիշեցնում են, որ Խոսրով արքան, հավաքելով բոլոր քրիստոնյա եպիսկոպոսներին ու երեցներին, նրանց վրա վերակացու նշանակեց Սմբատ Բագրատունուն և արքունի բժշկապետին (եւ կացոյց ի վերայ նոցա ոստիկանս զՍմբատ Բագրատունի, զանուանալն Խոսրովայ Շրնումն և զբժշկապետն արքունի)՝⁴³։ Արաբական արշավանքների շրջանում, երբ արաբները հասել էին մինչև Կ. Պոլիս, խալիֆան կայսրին առաջարկեց հնազանդվել և ընդունել արաբ պաշտոնյաներին, կայսրական գանձը խալիֆայի ու կայսեր միջև բաժանելու համառ (եւ արձակեմ ի քաղաքդ ոստիկանս և ըննեմ զամենայն գանձս և հրամայեմ բաժանել...)՝⁴⁴։

Ըստ երևույթին, «ոստիկան» բառը հայկական բնիկ միջավայրում այնքան էլ հարազատ հնչող մի բառ չի եղել և օգտագործվել է բնորոշելու համար օտար թագավորների կողմից նշանակված օտար վերակացուներին կամ պաշտոնյաներին։ Ոստիկանը պահվելներից կատարված փոխառություն է (ōstikān)⁴⁵ և նշանակել է հավատարիմ, վստահելի, այսինքն՝ քաղաքի մոտիկ անձնավորություն։

Ահա այս քիչ դործածված բառը, Բագրատունյաց շրջանում ապրող Հովհաննես Դրասխանակերտցու մոտ նոր երանգ է ստանում և հայ մատենագրության մեջ առաջին անգամ առատորեն օգտագործվում։ Նրանից հետո հայ պատմիչները թեև օգտագործել են «ոստիկան» բաց ռեանվրապահորեն, այլ ուրիշ բառերին զուգընթաց, ի միջի այլոց, Օրինակ՝ Ասողիկը, որն արաբական շրջանի մասին իր տեղեկությունները քաղել է Ղևոնդից և Դրասխանակերտցուց, ունի թե՛ առաջինի «հրամանատար» բառը⁴⁶, թե՛ երկրորդի՝ «ոստիկան»⁴⁷ և նույնիսկ «ամիրապետ»։ Վարդանի մոտ «ոստիկանի» հետ մեկտեղ գտնում ենք նաև «հրամանատար» և «զորավար»⁴⁸, իսկ Կիրակոս Գանձակեցու մոտ՝ «ամիրա» և «զորագլուխ» բառերը⁴⁹։

XVIII դարի երկրորդ կեսից սկսած թե՛ հայ, թե՛ եվրոպական պատմագիտության մեջ «ոստիկան» բառն արդեն անվերապահորեն դործ է ածվում Հայաստանի արաբ կառավարիչների համար։

Այս երևույթը սկիզբ է առնում Միրայել Չամչյանից, որն իր Հայոց պատմության երկրորդ հատորում ոչ միայն առաջորեն գործածում է «ոստիկան» բառը, այլև արաբական տիբապետության շրջանը կոչում է «Ժամանակ իշխանութեան ոստիկանաց»⁵⁰։ Հետևելով հեղինակավոր պատմաբանին, թե՛ հայկական, թե՛ եվրոպական պատմագիտությունը «ոստիկան» բառը գործ է ածում արաբ կառավարչի իմաստով։ Հայաստանի արաբ կառավարիչների նախնական ցուցակը կազմող Հ. Պետերմանը իր աշխատության հենց վերնագրում⁵¹ այդ անվամբ (ostikan) է կոչում նրանց, ի. Չամչյանի և ընդհանրապես մյուս պատմաբանների այս արարքը շատ բնական է, քանի որ յուրաքանչյուր ուսումնասիրող իր գրած ժամանակաշրջանի համար փնտրում է հատկանշական և որոշակի բառեր։ Սակայն ի՞նչ անուն կարելի էր տալ Հայաստանի արաբ կառավարչին, երբ Ղևոնդի հիշած «հրամանատարը» և «զորավարը», նույնպես և թովմայի «վերակացուն» կամ «մեծ հազարապետը» շատ վերացական էին։ Ուստի բնական է, որ այս բոլորի մեջ ամենահարմարը Դրասխանակերտցու մտքած «ոստիկան» բառն էր։

⁴² Նույն տեղում, էջ 82։

⁴³ Նույն տեղում, էջ 123։

⁴⁴ Նույն տեղում, էջ 147։

⁴⁵ H. Hubschmann, Armenische Grammatik, I, էջ 216։

⁴⁶ «Ստեփանոսի Տարոնեցույ Ասողկան Պատմութիւն Տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 124, 132։

⁴⁷ Ասողիկ, էջ 167։

⁴⁸ «Մեծին Վարդանայ Բարձրբերգեցույ Պատմութիւն Տիեզերական», ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1861, էջ 99։

⁴⁹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Յանջանյանի, Երևան, 1961, էջ 71։

⁵⁰ Պատմութիւն Հայոց, Բ, էջ 376։

⁵¹ J. H. Petermann, De Ostikanis, Arabicis Armeniae Gubernatoribus, Berolini, 1840.

ժամանակակից պատմագրության մեջ ճոստիկան» բառը կարելի է ոգտագործել միայն պայմանականորեն, ճիշտ այնպես, ինչպես Բյուզանդիա անունը՝ Արևելահռոմեական կայսրության համար:

Այսպիսով, «ճոստիկան» բառը արարական տիրապետության ժամանակ արար կառավարչին բնորոշ մի բառ չի եղել, այլ միայն հետագայում՝ Բագրատունյաց տիրապետության ժամանակ է մտել պատմագրության մեջ, շնորհիվ Հովհաննես Դրասխանակերտցու:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ԱՎԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պետրոս Առաքինի մասին, ինչպես հայտնի է, սուս ժողովրդի մեջ ստեղծվել և տարածվել են բազմաթիվ երգեր, զրույցներ, հեքիաթներ ու ավանդություններ: Հայ ժողովրդի մեջ երբեք մասին շատ վաղուց ստեղծվել է հեքիաթախառն մի զրույց, որը իր ժամանակին գրի է առնել վաժ եղել Հազարյան տոհմին վերաբերող, Տաթևի վանքում պահվող հայերեն մի ձեռագրում, որը 1850 թ. բնագրիակել է բանահավաք Ասլան Աթաբեկյանը և ուղարկել Մոսկվա՝ Հազարյան ձեռագրերի դասախոս բանասեր Մանր Մանրյանին, հրատարակելու համար: Ավանդությունը, սակայն, չի հրատարակվել և այժմ պահվում է Հայկական ՄՍՌ Միջնատրների Սովետին ստորմեր Մեքրոպ Մաշտոցի տնվան Պետական Մատենադարանի Մանրյանների արխիվում (թղթ. № 208, վավ. № 2267): Զրույցի անվանաթերթի վրա Ա. Աթաբեկյանը գրում է. «Թղթահամարող 70 արձանագրության սրբույ վանաց Տաթևոյ, ճառ ի մէջ վանքիից արձանագրության Հաչա-տանու գրեալ է արձանագրութիւն անուն մեծագործ ազգին Հազարեանոյ սակա որոյ արտահա-նեալ գրեալ եմ ի մէջ ժողովեալ արձանագրութիւն իմոյ, որպէս և ունիմ/ք և ընթեռնուին վե-րահասու լինիլ»:

Զրույցի սկզբում պատմվում է, որ առևտրական նպատակներով եվրոպացիների, այդ թվում հոլանդացիների, մոտ միայ է հղանում նոր երկրներ և ժողովուրդներ գտնել: Նրանք նավերով գնում են երկրագնդի զանազան կողմերը և հայտնաբերում նոր երկրներ, նոր ժողովուրդներ և նրանց հետ առևտուր անում: Հոլանդացիները, շարունակելով իրենց ճանապարհը, հասնում են Հնդկաստան, այնտեղ ծանոթանում են հայ վաճառականների հետ և առևտրական հարաբերությունների մեջ մտնում: Ոչնչով հոլանդացիների բարեկամությունից, հայ վաճառականները տեղափոխվում են Հոլանդիա, առևտրական ընկերություններ հիմնում ու եվրոպացիների հետ առևտուր անում մինչև Պետրոս Առաքինի Հոլանդիա գնալը (1697):

Այնուհետև զրույցում պատմվում է, թե իբրև Պետրոս Առաքինը ծպտված գնում է Հոլանդիա՝ արհեստներ և նավաշինություն սովորելու: Հոլանդացիները ճանաչում են նրան և բանտարկում: Բանտից Պետրոսին ազատում է Մարկոս Միրզախանով անունով հայ մի վաճառական, որը Պետրոսի հրավերով մտնում է նրա խուցը, փոխում նրա հետ իր հագուստը, ինքը Պետրոսի փոխարեն մնում խցում և այդպիսով ազատում նրան: Այդ մասին ձեռագրում պատմվում է:

«Այսմ ժամանակի եղև շշուռք ի մէջ հոլանդացոց, որպէս թէ մեծն Պետրոս կայսերն ուստաց անձանթիս եղեալ և մտեալ ի Հոլանդեայ վտան որոյ տերութիւնն նոցա, հրամայեաց, որ ծածուկ, որպէս և իցէ, ընթանել զնա և կալանաւորել: Որ և յաւուր միում ի զնալն մեծին Պետրոսի ի շուկայս, պատահեցաւ նմա հոլանդացի ոմն ու առեալ զնա պատուով տարաւ և ետ օրախոխ՝ յանձնեալ պահապանացն և ինքն հեռացաւ: Յայնժամ զգայացաւ մեծն Պետրոս, թէ հանկարծակի կալանաւորեցաւ, ապա սկսաւ ճեմել ի մէջ օրախին այսկոյս և յայնկոյս, չեառ ետեա ի յուսամտուն զոմն օտարական, որ երթայր ի փողոտայս, և մեծն Պետրոս իսկուն բազմել զյուսամտուն և նշանացի հրաւիրէ զնա ի ներքս: Ի մտանել օտարականին հետ ողջունելոյ, հարցանելով մեծն Պետրոս, թէ՞ «Ո՞վ ես, կամ ի՞նչ գործ ունես»: Ասէ օտարականն «Ես եմ այս վաճառական, եկեալ ի շարենից և ունիմ առա առևտուրս, նաեւ կամ ընկերութիւնս, այսինքն՝ կամպանիայս: Հարցանել կայսերն թէ՞ «Ի՞նչ ազգ ես»: Պատասխանէ օտարականն. «Ազգաւ հայ եմ, անունն իմ Մարկոս Միրզախանով»: Հարցանել թագաւորն թէ՞ «Լսած ես Մոսկվայ թագաւորն տեղս այս: Պատասխանէ այլրն. «Այո, լսած եմ»: Ասէ մեծն Պետրոս. «Որովհետեւ հաչեա, ունիմ ինչ խորհուրդ քեզ յայտնելոյ ու ինձ հաւատացուր ոչ ումեր շայտնելոյ: Ասէ Մարկոս: